№2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵԹԿՊԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
« 02 » սեպտեմբերի 2015թ. նիստում
ՌԵԿՈՏՐ ----------Դ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԿԻՆՈՅԻ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ և ԱՆԻՄԱՑԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխությունները 2017թ. Փետրվարի 28-ի դրությամբ)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնադրությունը սահմանում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի գործունեության իրավական հիմքերը:

1.2. Ֆակուլտետի կանոնադրությունը ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհուրդը: Ֆակուլտետի կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

1.3. Ֆակուլտետի կանոնադրության հիման վրա ֆակուլտետի խորհրդի կողմից մշակված ֆակուլտետի կանոնադրությունը դեկանի ներկայացմամբ հաստատվում է գիտական խորհրդի կողմից:

1.4. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

2. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի անվանումը և հասցեն

2.1. Ֆակուլտետի պաշտոնական լրիվ անվանումն է՝ Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետ

2.2. հայերեն՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի «Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետ»

ռուսերեն՝Факультет Кино, телевидения и анимации Ереванского государственного института театра и кино.

անգլերեն՝ Faculty of Cinema, Television and Animation of Yerevan State Institute of Theatre and Cinematography

3. ԵԹԿՊԻ Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի կարգավիճակը

3.1. Ֆակուլտետը ԵԹԿՊԻ-ի կառուցվածքային ստորաբաժանում է՝ օժտված իրավունքներով և պարտականություններով: Ֆակուլտետը չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

3.2. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵԹԿՊԻ-ի կանոնադրությամբ, ԵԹԿՊԻ-ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրությամբ, ինչպես նաև ԵԹԿՊԻ-ի և Կինոյի ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակներում ընդունած իրավական ակտերով:

4. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի խնդիրները

4.1. Ֆակուլտետը ԵԹԿՊԻ-ի ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն, առկա ուսուցման ձևով բակալավրի կրթական ծրագրով.

ա) 2016-2017 ուսումնական տարվա ընդունելությունից սկսած՝ բակալավրի ծրագրով երեք ՄԿԾ-ներով՝ 021103.00.6 Կինոարվեստ, 021101.00.6 Տեսալսողական արվեստ, 021301.00.6 Կերպարվեստ:

բ) 2015-2016 և նախորդ ուսումնական տարիների ընդունվածների համար բակալավրի կրթական ծրագրով՝ 071300 Կինոարվեստ, 071400 Օպերատորություն, 071900 Գեղանկարչություն մասնագիտություններով:

(4.1 կետը փոփոխվել է ԵԹԿՊԻ-ի Գ.Խ. 28.02.2017թ որոշմամբ, արձ.6):

4.2. Ֆակուլտետը համակարգում է ամբիոնների գիտահետազոտական աշխատանքները:

5.Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ինքնուրույնությունը

5.1 Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, ԵԹԿՊԻ-ի և ֆակուլտետի կանոնադրություններին:

5.2 ԵԹԿՊԻ-ն ֆակուլտետին տրամադրում է անհրաժեշտ գույք՝ օգտագործման իրավունքով:

6 Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի կառուցվածքը և կառավարումը

6.1 Ֆակուլտետը կազմված է Կինոյի և հեռուստատեսության, Կերպարվեստի և անիմացիայի ամբիոններից և ուսումնաօժանդակ այլ կառույցներից:

6.2 Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵԹԿՊԻ-ի և ֆակուլտետի կանոնադրություններին համապատասխան:

6.3 Ֆակուլտետի կառավարումը հիմնված է միանձնյա և կոլեգիալ կառավարման

զուգակցման սկզբունքների վրա:

6.4 Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը:

7 Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի խորհրդի խնդիրները և կազմավորման կարգը

7.1 Ֆակուլտետի խորհուրդն իր իրավասության շրջանակներում քննարկում և լուծում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերը:

7.2 Ֆակուլտետի խորհուրդը կարող է ունենալ ոչ ավելի, քան 11 անդամ: Ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ուսանողական խորհրդի նախագահը կամ տեղակալը:

7.3 Ֆակուլտետի խորհրդի մյուս անդամներն ընտրվում են դեկանի առաջարկությամբ՝ բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից, ֆակուլտետի ուսանողներից:

7.4 Ֆակուլտետի դեկանի ընտրությունից հետո մեկամսյա ժամկետում խորհրդի անդամների կազմը դեկանի ներկայացմամբ հաստատում է ԵԹԿՊԻ-ի ռեկտորը՝ 5 տարի ժամկետով:

7.5 Ֆակուլտետի խորհրդի քարտուղարին, դեկանի ներկայացմամբ, նշանակում է ԵԹԿՊԻ-ի ռեկտորը:

8 Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի խորհրդի իրավասությունները ֆակուլտետի խորհուրդը՝

8.1 դեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ առաջարկություն է ներկայացվում ինստիտուտի ռեկտորին,

8.2 առաջադրում է ԵԹԿՊԻ-ի խորհրդի, գիտական խորհրդի և ինստիտուտի ուսումնամեթոդական խորհրդի անդամների թեկնածություններ,

8.3 ձևավորում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի կազմը

(8.3 կետը ճանաչել ուժը կորցրած՝ ԵԹԿՊԻ Գ.Խ-ի 28.02.2017թ որոշմամբ, արձ.6):

8.4. լուծում է ֆակուլտետի ուսումնական, մեթոդական և գիտական աշխատանքների հարցերը,

8.5 . ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդին առաջարկություն է ներկայացնում ֆակուլտետի աշխատակցին պարգևատրումներ, պատվավոր կոչումներ շնորհելու նպատակով

8.6. քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները,

8.7. քննարկում է ֆակուլտետի քննաշրջանների արդյունքները,

8.8. լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների, դրամաշնորհների,

գործուղումների վերաբերյալ հաշվետվությունները,

8.9. քննարկում է ֆակուլտետի ամբիոնների որոշումների վերաբերյալ ամբիոնի անդամների գրավոր դիմումները,

8.10. մշակում և իրականացնում է միջոցառումներ՝ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական առաջխաղացման և որակավորման բարձրացման, ինչպես նաև ֆակուլտետում ուսումնառության որակի ապահովման ուղղությամբ,

8.11 լուծում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված՝ ֆակուլտետի կանոնադրությունից բխող այլ խնդիրներ:

9. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի խորհրդի աշխատակարգը

9.1 Ֆակուլտետի խորհրդի նիստերն ըստ անհրաժեշտության հրավիրում է դեկանը:

9.2 Ֆակուլտետի խորհրդի նիստերն իրավազոր են նրա կազմի ձայների 2/3-ի ներկայության դեպքում:

9.3 Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե խորհուրդը քվեարկության այլ կարգ չի սահմանում: Հավասար ձայների դեպքում վճռորոշ է դեկանի ձայնը:

9.4 Ֆակուլտետի խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը հրավիրում է դեկանի պաշտոնակատարը:

9.5 Ֆակուլտետի խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել բուհի ռեկտորը կամ նրա ներկայացուցիչը, ինչպես նաև հրավիրված անձինք:

Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ամբիոնների, աշխատակիցների և ուսանողների համար: Ֆակուլտետի խորհրդի նախագահը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարման պարբերական ստուգումներ և անհրաժեշտության դեպքում խորհրդին տեղյակ է պահում դրանց կատարման մասին:

9.6 Ֆակուլտետի խորհրդի նիստերն արձանագրվում են, որոնք ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

10 Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկանը՝

10.1 կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի գործունեությունն իր իրավասությունների սահմաններում, ԵԹԿՊԻ-ի ֆակուլտետի կանոնադրության համաձայն,

10.2 կարող է ունենալ տեղակալ, որին դեկանի ներկայացմամբ նշանակում է ԵԹԿՊԻ-ի ռեկտորը,

10.3 ապահովում է ԵԹԿՊԻ-ի խորհրդի, գիտական խորհրդի որոշումների, ԵԹԿՊԻ-ի ռեկտորի հրամանների, ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,

10.4 ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները,

10.5 առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի աշխատակիցներին և ուսանողներին խրախուսելու, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

10.6 վերահսկում է ֆակուլտետին հատկացված գույքի, նյութական միջոցների պատշաճ օգտագործումը, կազմակերպում և անցկացնում է միջամբիոնային գիտական, ուսումնամեթոդական խորհրդակցություններ և սեմինարներ,

10.7 լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ խնդիրներ,

10.8. Ֆակուլտետի դեկանի հանձնարարությունները և հրահանգները պարտադիր են ֆակուլտետի բոլոր աշխատակիցների և ուսանողների համար:

11 Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը

11.1 Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում է խորհրդակցական մարմին՝ ֆակուլտետի մեթոդական խորհուրդ, կազմված նախագահից և անդամներից, որոնք ընտրվում են ֆակուլտետի խորհրդում՝ ամբիոնների առաջարկությամբ:

11.2 Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը (ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն) քննարկում է դեկանի առաջարկով կամ ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

(11 կետը ճանաչել ուժը կորցրած՝ ԵԹԿՊԻ Գ.Խ-ի 28.02.2017թ որոշմամբ,արձ.6):

12. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները

12.1. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ամբիոնները

12.1.1. Ֆակուլտետի ամբիոնները ուսումնագիտական գործընթացի կազմակերպման և իրականացման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:

12.1.2. Ֆակուլտետի ամբիոնների խնդիրներն են՝ կազմակերպել ուսումնական գործընթացը, իրականացնել մեթոդական և գիտական հետազոտություններ, գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման աշխատանքներ:

12.1.3. Ֆակուլտետի ամբիոնները գործում են ԵԹԿՊԻ-ի,ֆակուլտետի Կինոյի և հեռուստատեսության,Կերպարվեստի և անիմացիայի ամբիոնների կանոնադրությունների համաձայն:

12.1.4. Ֆակուլտետի ամբիոնների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհուրդը:

12.2. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոնի վարիչը՝

12.2.1. կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները: Ամբիոնը ներկայացնում է ինստիտուտի, ֆակուլտետի ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում,

12.2.2. պատասխանատու է ամբիոնի գործունեության համար և սահմանված կարգի համաձայն տարին մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի խորհրդին,

12.2.3. ամբիոնի վարիչի գործունեությունը ֆակուլտետի խորհրդում բացասական գնահատականի արժանանալու դեպքում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչի իրավունքները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Փակ, գաղտնի քվեարկությամբ՝ խորհրդի կազմի ձայների մեծամասնությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշում կայացնելու դեպքում խորհուրդը միջնորդում է ԵԹԿՊԻ- ի գիտական խորհրդին հաստատելու իր որոշումը:

12.3. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ամբիոնի կազմը

12.3.1. Ֆակուլտետի ամբիոնի գիտամանկավարժական հաստիքացանկում ընդգրկվում են պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ և դասախոսներ:: Ամբիոնի կազմում են նաև ուսումնաօժանդակ անձնակազմը:

12.3.2. ԵԹԿՊԻ-ի կանոնադրության հիմնադրույթներին համապատասխան՝ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման, առաջքաշման, վերահրամանագրման սկզբունքները և ընթացակարգը սահմանվում են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգով:

12.3.3. Ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, կազմի և ԵԹԿՊԻ-ի միջև աշխատանքային հարաբերություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով, որոնց նախորդում է պաշտոնի հավակնորդի ընտրության մրցութային կարգը (բացառությամբ մանկավարժական հատուկ տարակարգեր զբաղեցնելու դեպքերի):

12.4. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ամբիոնների աշխատակարգը

12.4.1. Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնական, գիտամեթոդական, ստեղծագործական և բուհական աշխատանքների այլ տեսակներ:

12.4.2. Ամբիոնի գործունեության հարցերը քննարկվում են ամբիոնի վարիչի գլխավորությամբ անցկացվող ամբիոնի նիստերում, որոնք հրավիրվում են նվազագույնը ամիսը մեկ անգամ:

12.4.3. Հրավիրված անձինք ամբիոնի նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

12.4.4. Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են ամբիոնի վարիչը և քարտուղարը: